



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 39-ՐԴ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅԻՍ 13-ԻՆ ԵՒ 14-ԻՆ**

Ուրբաթ, Մայիս 13-ին եւ Շաբաթ, Մայիս 14-ին, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 39-րդ նստաշրջանը պիտի գումարովի Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Սարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Յովիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Օրակարգի վրայ են մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն ընթացքն ու արդիւնքը:

Ազգային Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, նոյն աշխատանքներու ծիրին մէջ, նմանապէս Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ, Չորեքշաբթի, 11 Մայիսին տեղի պիտի ունենայ Թեմիս հոգեւորականաց համագումարը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր:

Իսկ Յինգշաբթի, Մայիս 12-ի երեկոյեան, Ազգային վարչութեան հրաւերով, տեղի պիտի ունենայ մեր եկեղեցիներու հոգաբարձական եւ տիկնանց կազմերու ժողովը:

Այս ժողովները առիթ են միասնաբար քննարկելու մեր Թեմը յուզող հասարակաց հարցերն ու ճշդելու անոնց լուծման միջոցները, այդ նպատակով կազմելու համապատասխան ծրագիրներ:

### **PRELACY 39<sup>TH</sup> REPRESENTATIVES ASSEMBLY TO BE HELD ON MAY 13 & 14**

The 39<sup>th</sup> Representatives Assembly will convene on May 13<sup>th</sup>, 2011, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the meeting which is being hosted by St. Garabed Church of Hollywood.

The Assembly will cover a number of issues related to our churches, schools, and committees serving under the Prelacy.

In preparation for the Representatives Assembly, a clergy conference will be held at the Prelacy on Wednesday, May 11<sup>th</sup>, and a meeting of our churches' Boards of Trustees and Ladies Guilds on Thursday, May 12<sup>th</sup>.

\*\*\*\*\*

## ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՈՎԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Միացեալ Նահանգներու մեր Թեմի գեղեցիկ աւանդութիւններէն Է,



միջ-եկեղեցական  
յարաբերութեանց ծիրէն  
ներս, գործակցական սիրոյ  
այն մթնոլորտը, որ  
տարիներէ ի վեր կը տիրէ  
Արեւելեան Ուղղափառ Հայ,  
Ղըպտի եւ Ասորի քոյր  
եկեղեցիներու եւ անոնց  
բարեջան Առաջնորդներուն  
միջեւ:

Անոնց  
քրիստոնեական  
փոխադարձ սիրոյ եւ  
յարգանքի մթնոլորտի մէջ  
սերտօրէն կը գործակցին եւ

միատեղ՝ ժամերգութիւն, աղօթք, սուրբ պատարագ թէ կրօնական,  
դաստիարակչական, պատանեկան ու երիտասարդական մակարդակներու  
վրայ օգտաշատ ծրագիրներ կը մշակեն եւ հաւաքներ կը կազմակերպեն,  
նպատակ ունենալով քրիստոնեական ուղղափառ դաւանութիւնը,  
եկեղեցական հարուստ անցեալն ու ժառանգութիւնը փոխանցել նոր  
սերունդներուն եւ ամրապնդել Առաքելական հաւատքը:

Այս ծիրին մէջ, Հինգշաբթի, 5 Մայիսին Ղպտիներու Ս. Մարիամ  
Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Լոս Անճելըս, տեղի ունեցաւ համատեղ Ս.  
Պատարագ, նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Արեւելեան  
Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներուն, յանձինս հիւրընկալ Ղըպտի  
Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոսի, Թեմիս  
բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ Ասորի  
Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ.  
Եունճին Զափլան Արքեպիսկոպոսի:

Ս. Պատարագին մասնակցեցան երեք եկեղեցիներու Արեւմտեան  
Թեմէն ներս ծառայող եկեղեցական հայրերը:

Հոգեւոր Առաջնորդները զգեստաւորուած, հոգեւորականներու  
թափօրով առաջնորդուեցան Ս. Եկեղեցի, ուր համատեղ կատարեցին Ս. եւ  
անմահ Պատարագը: Ս. Պատարագի ընթացքին, յիշուեցան նաեւ երեք  
հոգեւոր պետերը՝ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը, Շնուտա Գ.  
Պապը, եւ Չաքքա Պատրիարքը:

Ս. Հաղորդութեան ժամանակ, ներկայ բոլոր եկեղեցականները, երեք

շարք կազմած, երկիւղիւ եւ հաւատով մօտեցան եւ հաղորդուեցան Քրիստոսի Սուրբ մարմինով եւ արինով:

Ս. Պատարագի աւարտին ներկայ հոգեւորականներուն ողջունեց հորընկալ Ղպտի եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոս, եւ ապա Ղպտի Ուղղափառ եկեղեցւոյ եկեղեցականներէն՝ Յոգշ. Տ. Ճոն Վարդապետ, խօսեցաւ եկեղեցւոյ հայր՝ Ս. Աթանաս Աղեքսանդրացիի կեանքին եւ գործերուն մասին:

Յաջորդաբար ողջոյնի խօսքով հանդես եկան Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, որ իր խօսքին մէջ շեշտեց այն հանգամանքը, որ երեք ազգերն ալ պատմութեան ընթացքին իրենց քրիստոնեական հաւատքը պահպանած ու պաշտպանած են արինով, եւ մաղթեց որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն տիրէ եւ քրիստոնեայ ժողովուրդները ապրին խաղաղութեան մէջ, ինչպէս նաեւ ներկաներուն յայտնեց, թէ այս տարի Քրիստոսի Ս. Յարութեան տօնը եւ Ապրիլ 24-ը զուգահիսպած է նոյն օրը, որ Հայ ժողովուրդի ալ շարդէն ու ցեղասպանութենէն յարութիւն առնելու յիշատակն է. եւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եուճին Բափլան Արքեպիսկոպոս, որ իր խօսքին մէջ մաղթեց, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիները միասիրտ ու մէկ հոգի դառնան ու միատեղ գլխատուած փառաբանեն, ինչպէս էր պարագան քրիստոնեական եկեղեցւոյ առաջին շրջանին:

Արարողութեան աւարտին, հաւաքական խմբանկար առնուեցաւ, որմէ ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Տարբեր եկեղեցիներու հոգեւոր հայրեր սեղանակից եղան իրարու:

Սիրալիր մթնոլորտի մէջ սկսուած հոգեպարար օրը իր աւարտին հասաւ աղօթքով եւ բարեմաղթութիւններով:

## ORIENTAL ORTHODOX CHURCHES ANNUAL JOINT DIVINE LITURGY



On Thursday, May 5<sup>th</sup>, 2011, the Prelates and clergy of the Armenian, Coptic, and Syriac Churches gathered at Holy Virgin Mary Coptic Orthodox Church in Los Angeles for their annual joint Divine Liturgy.

The gathering was held under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops headed by

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church, and H.G. Bishop Serapion, Prelate of the Coptic Orthodox Church.

Clergy members from the three churches participated in the Liturgy.

Divine Liturgy was celebrated jointly by the three Prelates. During the service, prayers were offered for the three spiritual leaders H.H. Catholicos Aram I, H.H. Pope Shenouda III, and H.H. Patriarch Zakka I. At the conclusion of the service, Holy Communion was offered to all participating clergy.

Following Divine Liturgy, Bishop Serapion greeted the Prelates and clergy members, and invited Fr. John to speak about the life and works of Coptic Church father St. Athanasius of Alexandria.

Remarks were then delivered by Archbishop Mardirossian and Archbishop Kaplan. Archbishop Mardirossian noted how Easter and the 96<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide coincided this year stating that this coincidence was fitting given that as mankind was redeemed and reborn by the Resurrection of our Lord, so were the Armenian people resurrected and reborn from the ashes of Genocide. He continued, "Our Coptic and Syriac brothers know well the pain and struggle of the Armenian people for you too have tragically suffered persecution for your faith, which continues to this day. What we all have in common is our steadfast faith in our Lord Savior Jesus Christ, which has sustained us and our faith for centuries." The Prelate concluded by expressing hope for peace to prevail in the Middle East.

In his remarks Archbishop Kaplan hoped for all Christian churches to unite and become one body and one soul as was the case in the early days of Christianity.

The day concluded with a luncheon.

\*\*\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՄԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Նախօրօք ճշդուած ժամադրութեան մը հիմամբ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 4 Մայիսի յետմիջօրէին ընդունեց այցելութիւնը Զայաստանի մօտ ՄԱԿի ներկայացուցիչ Տաֆիւս Կարչեւայի եւ անոր գլխաւոր խորհրդական Արմէն Բայպուրթեանի: Անոնց կ'ընկերանային Զայ Ամերիկեան Առեւտուրի Ընկերակցութեան փոխ

Նախագահ Երուանդ Արճոյեան եւ այցելութեան համակարգումի պատասխանատու Խաչատուր Խուտիկեան:

Զանդիպումին ներկայ եղան Զոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, Ազգ. Կեդրոնական Կարչութեան անդամներէն Տիար Վահէ Եագուլպեան, Ազգ.

Վարչութեան ատենապետ Տիկին Ռիմա Պողոսեան եւ փոխ ատենապետ Տիար Ճորճ Զօրպաճեան::

Առաջնորդ Սրբազանը ողջունեց յարգելի հիւրերը եւ ընդհանուր ծանօթութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան ու աշխատանքի դաշտերուն մասին, նկատի ունենալով յատկապէս մեր եկեղեցիներն ու ազգային վարժարաններու գործունեութիւնը: Փոխադարձաբար, ՄԱԿի պաշտօնատարները տեղեկութիւններ տուին Յայաստանի մէջ միջազգային կազմակերպութեան գործունեութեան եւ պետական ու եկեղեցական շրջանակներու հետ գործակցութեան դաշտերուն մասին: Խորհրդակցութիւնները ընդգրկեցին Յայաստանի տնտեսական, ընկերային ու մշակութային կեանքերը եւ անոնց զարգացման մէջ ՄԱԿի կատարած ներդրումը: Ծանօթութիւններ ու տեսակետներ փոխանակուեցան նաեւ Սփիւռքին կողմէ Յայաստանի տրամադրուող օժանդակութեանց մասին, այն նկատառումով, որ անհատներ թէ հաստատութիւններ կրնան ՄԱԿի ճամբով օժանդակութիւն տրամադրել Յայաստանին:

Ի պատասխան ՄԱԿի ներկայացուցիչին հարցումներուն, Առաջնորդ Սրբազանն ու ներկայ հիւրընկալները ընդհանուր գիծերու մէջ ծանօթութիւններ տուին յատկապէս Միացեալ Նահանգներու հայկական գաղութի կազմաւորման հոլովոյթին մասին, իբրեւ հետեւանք՝ Օսմանեան կայսրութեան հալածանքներուն, Յեղասպանութեան, եւ անոնցմէ խուսափելով՝ այս ափերը դիմողներու ալիքներուն: Անոնք կանգ առին իրերայաջորդ սերունդներու ազգային պատկանելիութեան զգացումին, ու ի մասնաւորի՝ Ֆրեզկոյի հայկական գաղութի իւրայատկութեան վրայ, նշելով, որ շրջանը, ըլլալով երկրագործական գօտի, կրնայ կարելոր ներդրում ունենալ Յայաստանի զարգացման աշխատանքներուն մէջ:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն:

## PRELATE WELCOMES UNITED NATIONS RESIDENT COORDINATOR DAFINA GERCHEVA



On Wednesday, May 4<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy United Nations Resident Coordinator Ms. Dafina Gercheva and Senior Advisor Mr. Armen Baibourtian. They were accompanied by Armenian American Chamber of Commerce Vice-President Mr. Yervand Arjoyan, and Mr.

Khatchadour Khoodigian, who had coordinated the visit.

Very Rev. Fr. Barthev Gulumian, Central Executive member Mr. Vahe Yacoubian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and Executive Council Vice-Chair Mr. George Chorbajian participated in the meeting.

The Prelate gave a general overview of the Prelacy's endeavors and mission, focusing specifically on our churches and schools. The guests reported on the endeavors of international organizations operating in Armenia and also on United Nations development programs aimed at improving Armenia's financial and social sectors. There was also discussion on Diaspora assistance to Armenia and how individuals and organizations can aid Armenia through the United Nations.

In response to questions from the guests on Armenian communities in America, the Prelate and Council members spoke of persecution by the Ottoman Empire and the subsequent Genocide as the primary reason for emigration of Armenians to America. They also noted that the Armenian community of Fresno can play an important role in the development of Armenia since they live in a largely agricultural area and have unique experiences that other communities may not.

At the conclusion of their meeting, the Prelate presented the guests with mementos.

\*\*\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ



Երեքշաբթի, 3  
Մայիսին, Թեմիս բարեխամ  
Առաջնորդ Բարձր. Տ.  
Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան,  
ընդառաջելով Ազմային  
Վահան եւ Անուշ Շամլեան  
վարժարանի  
տնօրէնութեան հրաւերին,  
այցելութիւն մը տուաւ  
դպրոց եւ դիմաւորուեցաւ  
վարժարանի տնօրէն Տիար  
Վազմնէն Մատնէլեանի եւ

փոխ տնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիէլեանի կողմէ: Ներկայ էին Արժ. Տ. Վազմնէն Քիւյ. Աթմաճեան եւ Ազմն. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Ճորճ Զորպաճեան:

Առաջին հերթին, անոնք այցելեցին կարմն մը դասարաններ, ուր Առաջնորդ Սրբազանը առիթը ունեցաւ զրուցելու աշակերտներուն հետ: Աւելի ուշ, 8-րդ կարմնի աշակերտները խմբուեցան սրահին մէջ, ուր Առաջնորդ Սրբազանն ու ընկերակիցները «հիւրընկալեցին» իրենց

Հայաստան ճամբորդութենէն քաղած տպաւորութիւններն ու զմտացումները պատմելով: Առաջնորդ Սրբազանը մտհունակութիւն արտայայտեց աշակերտներուն հայրենասիրական զմտացումներուն համար եւ յորդորեց հաւատարիմ մնալ մեր հայկական ավանդներուն ու տեր կանմննիլ ժառանգութեանց:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը մասնակից եղաւ վարժարանի ծնողա-օժանդակ մարմինին կողմէ կազմակերպուած հիւրասիրութեան մը, ուսուցիչներու յարմանքի շաբթուան առիթով, ի պատիւ վարժարանի ուսուցիչներուն: Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը ու մնահատեց ծնողա-օժանդակ մարմինը այս ձեռնարկին առիթով:

Եւէնք, որ 8-րդ կարմնի շրջանաւարտները նոր վերադարձած էին հայրենիք իրենց այցելութենէն: Տարիներու բարի սովորութեան համաձայն, անոնք Մայիս 25-ին Ազմային Առաջնորդարան պիտի այցելէն, աղօթքի պահ մը պիտի ունենան Առաջնորդ Սրբազան Հօր հետ եւ Ս. Հաղորդութիւն պիտի ստանան:

## PRELATE VISITS CHAMLIAN SCHOOL



Upon the invitation of the school administration, on Tuesday, May 3<sup>rd</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited Vahan and Anoush Chamlian School where he was greeted by Principal Mr. Vazken Madenlian and Vice-Principal Mrs. Rita Kaprielian. Rev. Fr. Vazken Atmajian and Executive Council Vice-Chair

Mr. George Chorbajian joined the Prelate.

Upon his arrival the Prelate first visited several classrooms and addressed the students. Later, they gathered at the auditorium where the 8<sup>th</sup> grade students spoke of their experiences and feelings during their recent trip to Armenia. The Prelate expressed his joy at the positive sentiments expressed by the students about their trip, and urged them to always remain faithful to our heritage and traditions.

The Prelate later attended a reception organized by the Parent Support Committee for the administration in honor of teacher appreciation week. The Prelate blessed the tables and thanked the Parent Support Committee for honoring the teachers with this reception.

On May 25<sup>th</sup>, the 8<sup>th</sup> grade students will visit the Prelacy where they will participate in a prayer service led by the Prelate and receive Holy Communion.

\*\*\*\*\*

